

բարուի Լեհաստանի թագաւորին բարեպաշտութեան՝ Հայ ժողովուրդին հովանաւորութիւնը: Կը գտնուի նաեւ Վտակը, կնքուած իր կնիքով, որուն մէջ կը պատմէ թէ ինչպէս Սրբազան Քահանայապետէն զրկուեցաւ Ֆէրտինանտ կայսեր եւ թէ չորս ամիս անոր մօտ մնաց, յետոյ Լէոպոլիս վերադարձաւ: Հոն կը յիշէ մեծ խաչը, մուշէղը (եկեղեցական կարճ շապիկ) սպիտակ եւ վարմիր զգեստները, շապիկը, եպիսկոպոսական թաղը, զոր բոլորն ալ Սրբազան Քահանայապետը իրեն պարզեւած էր իբրեւ իր ամենասիրելի հիւրին»⁵⁰:

Հոս պէտք է նկատել որ երկու վերջին վկայութիւններուն մէջ, ինչ ինչ մանրամասնութիւններ թէեւ անճիշտ կը թուին, բայց չեն հակասեր պատմական ճշմարտութեան, այլ վը կարօտին բացատրութեան մը: Արդարեւ Կարոլոս Ե. կայսրը (1500-1558), որդին Փիլիպպոս Գեղեցիկի, Աւստրիոյ արքեպիսկոպոսին, եւ Յոլանդացի Լաւրացիայի, ժառանգած էր, ի միջի այլոց, նաեւ Հապսպուրկներու կալուածներու իրաւունքը⁵¹: Սակայն 1521ին ան թողուց Աւստրիացուց կալուածներու ժառանգութիւնը ի նպաստ կրտսեր եղբորը, Ֆէրտինանտի (1503-1564), որ անոնց թագաւոր եղաւ եւ

1558ին ալ կայսր⁵²: Ասկից առաջ եկած են յիշեալ վկայութիւններու մէջ այդ անճշտութիւնները: Բայց ասկէ չի հետեւիր որ Ստեփանոս Սալմաստեցին խօսած չըլլայ Ֆերտինանտ Ա. թագաւորին հետ ալ՝ հայկական դատին շուրջ:

Ահա ինչ որ կարելի եղաւ ըսել Ստեփանոս կաթողիկոսի Լեհաստանի մէջ անցուցած ժամանակին մասին: Մինչդեռ Օրմանեան խօսելով նոյն նիւթին շուրջ, Ազգապատումի մէջ կը գրէ հետեւեալը. «Լեհաստանի յիշատակներն ալ մեզի յատուկ մանրամասնութիւններ չեն տար Ստեփանոսի գործունէութեան, որ կարծես թէ անցած տեղերուն մէջ ընաւ հետք չէ թողուցած, անցած ըլլալուն վրայ կատարած յարուցանելու չափ»⁵³:

Մեր ըսածներուն լոյսին տակ՝ Օրմանեանի խօսքերը բաւական տարօրինակ կը թուին. մանաւանդ, երբ նկատի առնենք՝ որ եթէ ան բանար Հ. Մ. Բժշկեանցի յիշեալ գործը կամ Ալիշանի Կալենիցը, զոր իր մատենագիտական ցանկին մէջ կը յիշէ, բաւական պիտի ըլլար համոզուելու հակառակին:

(Շար. 2)

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՊԵՏՐՈՎԻՉ
(Լեհահայ)

ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԷՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

(Շար. տե'ս «Բագմավէպ» 1962, ք. 3-5, էջ 62)

ԳԼՈՒԽ Ե.

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿՈՒ ՍՈՒՐԻ ՄԻՋԵՒ

Խաչիկ Բ. կաթողիկոս - կայսերական բանակը բնութեմէն հալածուած - Կոստանդին դուքս կայսր հռչակուած - Խաչիկ Բ. կաթ. Կ. Պոլսոյ մէջ - Թուրքերը Սեբաստիոյ մէջ - Հաւատաւնաւորեան ատեան - Մագիստրոսի վերջին ձեռնարկները - Խաչիկ Բ. ի ազատութիւն - Մագիստրոսի սերունդը - Պաղիմի եւ Թլիսու մի կոտորածները - Փոլս-վրէժի պատերազմներ:

ԽԱՉԻԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Այդ մի եւ նոյն 1058ի վշտաշատ տարուան մէջ, Պետրոս Գետադարձ կաթողիկոսը կեանքը կնքեց եւ թաղուեցաւ Սեբաստիոյ Ս. Նշան վանքին մէջ: Խանդավառուող Մ. Ուռհայեցին կը կոչէ զինքը «ամենագովելին եւ պարիսպ սրբոյ եկեղեցւոյ»: Սակայն արտասուելի իրականութիւնը այն էր, որ Հայաստանեայց եկեղեցւոյ այդ պարիսպը, զեռ աչքերը չի կարող հեռուէն տեսնել ու դիտել էր իր հայրենիքը, որ քարուքանդ եղած, անչքացած, անմարդացած, ցաւալի եւ ողբալի կացութեան մատնուած, ոտքի վրայ կը մնար չնորհիւ տառապող հայ ժողովուրդին, որ ապրելու, յարատեւելու գերբնական ոյժ մը ունէր իր հոգիին խորքը: Այս բոլորը տեղի ունեցեր էր Անի քաղաքին վաճառումին պատճառով, որու գլխաւոր գերակատարն էր, ինչպէս

տեսնուեցաւ, իր յունամուլ, շահասէր, եւ կարճատես քաղաքականութիւնը:

Հայաստանեայց եկեղեցւոյ գլուխը կը վախճանէր Սեբաստիոյ Արծրունի թագաւորութեան սահմանին մէջ, որ թէեւ հայ էր, բայց զաղթական ձեւ ունէր. ուստի կարելի էր հին ոճով կատարել Պետրոս Գետադարձի յաջորդին ընտրութիւնը, քանի որ Հայաստանի բնիկ թագաւորը իր զահէն հալածուած եւ հայ նախարարները իրենց բնիկ զաւառներէն ընտրուած, չէին կարող կաթողիկոսական ընտրութեան մասնակցել: Բայց, բարեբախտաբար նախահոգ զգուշութեամբ՝ Գետադարձ իրեն տեղապահ կարգեր էր, ինչպէս տեսանք, իր քեռորդին՝ Խաչիկ եպիսկոպոսը, որ կը նստէր Անի քաղաքը: Կաթողիկոսական ձեռնադրութեան ալ պէտք չունէր, քանի որ, ինչպէս կը վկայէ ահանաւան պատմիչը՝ Ա. Լաստիվերոցին, «գձեռնադրութիւն հայրապետութեան վաղնջուց ընկալեալ էր»¹:

Խաչիկ Բ. վեց տարի միայն կաթողիկոսական իշխանութիւն վարեց: Այդ համառօտ ալեկոծ շրջանին՝ անցաւ վշտերու շարքէ մը, սրտի վսկիծ ունեցաւ տեսնելով յունական կայսրութեան նենգաւոր քաղաքականութեան զաղտնի ծալքերը, որոնց դիմումն էր Հայոց թագաւորական աթոռին ջնջումը: Բայց նա անընկճելի արիւթեամբ տոկաց փոթորիկներուն, ամէն շահախնդրութենէ հեռու, պաշտպան հայ եկեղեցւոյ աղղային ծէսին եւ

50 Bibl. Apost. Vatic., cod. Vatic. Lat., nr. 12561, p. 122.

51 Capasso C., Carlo V. imperatore, art. in Enciclopedia Italiana Treccani, vol. IX, p. 41-45.

52 Kretschmayr H., Ferdinando I imperatore, art in Encicl. It. Treccani, vol. XV, p. 8-9.

53 Օրմանեան, Ազգապատում, Բ. սիւն 2244:

1 Ա. Լաստ. ԺԴ. 60:

հայրենի շահերուն, զուրգուրալով իր հօտին վրայ, արդարութեան համար տանջուելով: Ահա ասոնք եղան իր փայլուն դործունէութեան տիրողոսները, որ կարող էին շարժել նախանձը իր մօրեղբօր: Նա աւելի նախընտրեց նահատակ մը ըլլալ, քան կայսերական պալատներու մէջ կեղծ պատիւներով եւ շողորթութեամբ շրջապատուիլ: Իրաւունք ունէր Ուոհայեցիին իրեն համար ըսելու «լցեալ ամենայն սրբասնունդ առաքինութեամբ եւ բարեխաւքաւ անուամբ, գարգաբեալ շնորհօք առաքելական եւ մարգարէական»²:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԲՆՈՒԹԵՆԷՆ ՀԱՆԱԾՈՒԱԾ

Ինչպէս տեսանք, Կոմնիանոս անցնելով Տոնայիս դետը, իրեն նպատակ ըրած էր լուծի տակ առնել արի եւ անընկճելի Բուլղարիան: Կայսերական բանակը այդ երկրին վրայ ոտք դրեր էր ամբարն ժամանակ, որ իրեն համար սատակիչ պատուհան մը եղաւ. «Եւ ահա, կը գրէ Ուոհայեցիին, արեւմուտքէն կ'ելլէր ամպ մը, եւ կուգար Կիմնիանոսի բանակին վրայ, եւ ամպը տեսիլքով սեւ եւ ահաւոր էր, եւ ոչ ոք չէր համարձակեր անոր նայիլ. եւ զան ճայթումներ եւ որոտումներ, յարուցանելով հրացայտ փայլատակումներ. այն ատեն տեղաց սարսափելի ու մեծահատիկ կարկուտ, որուն սաստկութենէն զինուորները մէկիկ մէկիկ փախան եւ չէին կրնար փրկութեան միջոց մը գտնել: Թագաւորը այս բանը տեսնելով՝ բարկութեամբ լեցուեցաւ եւ ակամայ դարձաւ որպէս փախստական. իսկ բոլոր զինուորները ցրուեցան լեռներու եւ դաշտերու մէջ. տեսնելու բան էր մեծ կոտորածը՝ զոր բանակը կրեց այնչափ հար-

ուածներէն: Անթիւ մարդիկ կորան, հայրը որդիներէն եւ որդին հօրմէն, եղբայրը եղբօրմէն, եւ թագաւորը երեք մարդերով կորսուեցաւ մինչեւ Տոնայիս գետը, եւ ապա զտնուեցաւ»³:

Երբ կայսրը զօրահանդէս ըրաւ, «տեսաւ որ, կ'ըսէ հայ պատմիչը, իր զինուորներուն մեծ մասը երկնքի բարկութենէն կոտորուած էին». ապա կ'աւելցնէ. «ձիերու, ջորիներու, ոսկիի, արծաթի կոտորածին չափ չկար»⁴:

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԴՈՒԿԱՍ ԿԱՅՍՐ ՊԱՍԿՈՒԱԾ

Կոմնիանոս, բնութեան այս ծանր հարուածէն ուժգին ցնցուած, թէեւ բիրտ զօրական եւ կայսերական դահին ցանկացող, իր բանակին այս հարուածին մէջ տեսաւ երկնքի արդարութեան մատը, եւ վճռեց դահին հրաժարիլ: Այդ մասին Մ. Ուոհայեցիին կը գրէ. «Գիտացեալ Կոմնիանոսն, եթէ այս ամենայն աստուածաստ բարկութիւն վասն իմոյ յանցանացն եհաւ ի վերայ քրիստոնէից, զի մեղօք իմովք բարկացուցի զԱստուած, եւ եկեալ ի Կ. Պոլիս եւ անկեալ առաջի Աստուծոյ խնդրէր քրդոսքիւն մեղաց իւրոց գոր արար, եւ այնուհետեւ խնդրէր ելանել յաթոռոյ քաղաքութեան եւ մտանել ի կարգ ապաշխարութեան պահօք եւ արտասուօք»⁵:

Բայց կ'երեւի թէ «անմեղ արիւն թափող» կայսրը վանք քաշուելու իր որոշումը այն ատեն միայն դործադրեց, երբ մէկ կողմը հարուած մը իջաւ, հասկնալով որ աստուածաստ բարկութիւնը ուղղակի իր անձն ալ հարուածեւ է: Նա Ուոհայեցիին բերել տուաւ իր որդեգիրը Կոստանդին Դուկաս, ազնուական տոհմէ, որ մեր պատմիչներէն կոչուած է «Տու-

կիծ», «Տուկ» բառէն, որ կը նշանակէ դուքս: Կոմնիանոս «հանեց իր զուլիսէն թագը եւ դրաւ Դուկասին գլուխը, երկըրպազեց անոր եւ նստեցուց թագաւորութեան աթոռը»⁶: Ապա, ինքզինքը գահընկէց ընող կայսրը «հազաւ կրօնաւորի զգեստ, զնաց անապատ եւ եղաւ վանական»⁷: Միջին դարու մէջ, սովորական բան էր, որ իշխան մը կամ ասպետ մը, պատերազմական դաշտի վրայ տեսնելով մահը դէմ առ դէմ, մերկանար իր զինուորազէն, կամ զինուորական պատիւներէն, հաշտուէր իր ոսոխին հետ, եւ քաշուէր վանական կեանքին:

Կոստանդին Դուկասի թագաւորութիւնը (1059-1067) յունական աշխարհը ներքսապէս խաղաղացուց եւ ամէնուն այն յոյսը ներշնչեց՝ թէ նա զինուորապէս ուժեղ դիրք մը պիտի բռնէ Սելճուքեան թուրքերուն դէմ, ապահովելով երկրին արեւելեան սահմանադրութիւնը եւ վերահաստատելով կայսրութեան վարկը: Բայց նա ընդհակառակն բոլորովին տարբեր մարդ դուրս եկաւ. հայ աշխարհը պաշտպանելու տեղ, զեռ աւելի զրգոյց այն մեծ ատելութիւնը՝ որ կը տիրէր հայ եւ յոյն քոյր ազգերու մէջ, որդեգրելով վոյր քաղաքականութիւն մը, որ էր հայերը ազգով ու դասանանքով յոյն ազգին հետ ձուլել: Բազմաթիւ տարիներ վերջ, այս միեւնոյն կոյր քաղաքականութիւնը պիտի հետապնդէր ձարական Ռուսաստանը, իր իսկ ձեռքով Ռումանովեան տան գերեզմանը փոքրելով:

ԽԱՉԻԿ Բ. Կ. ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Հազիւ գահը բարձրացած՝ Կոստանդին Դուկաս իմանալուն պէս թէ Պետրոս Գեօտաղարձ վախճանած է եւ խաչիկ անոր յաջորդ նշանակուած է, մտածեց «խա-

փանել զհայրապետութիւնն յազգէն Հայոց»: Նա յատուկ խնդրանքներ զրկեց, որ խաչիկը Կ. Պոլիս փոխադրեն, եւ միանգամայն Սեբաստիոյ քաղաքին մէջ Պետրոսի թողած հարստութիւնները եւ այլուր վաթողիկոսին ունեցած ոսկի եւ արծաթի գանձերը, ինչ որ գտնեն՝ մէկ տեղ ժողովեն եւ իրեն բերեն»⁸: Այդ գանձերը գտնելու համար՝ խնդրակները բռնուցիւն բանեցուցին վաթողիկոսին եւ Նիխիէի վրայ, եւ Սեբաստիոյ մէջ շատերը նոյն գանձերուն համար «ի խոշտանգանս մատնեցին»⁹:

Երբ խնդրակները խաչիկ կաթողիկոսը, որ այդ ատեն Սեբաստիա կը գտնուէր, Նիխիէ եպիսկոպոսին եւ ուրիշ եպիսկոպոսներու հետ Կ. Պոլիս բերին, ձեռք անցուցած գանձերն ալ միասին, կայսրը դոհ չմնաց եւ սկսաւ կաթողիկոսը նեղել, որպէսզի պահուած գանձերը յայտնէ կամ յանձնէ, որովհետեւ քանի մը չար լեզուներ կայսեր ականջը հասցուցեր էին՝ թէ Պետրոս շատ հարստութիւն ունի, որով կայսեր մտքին մէջ այն կասկածը արթնցեր էր՝ թէ անոր արկղէն մեծամեծ հարստութիւններ պահուած են, մանաւանդ որ Պետրոս ատեն մըն ալ արքունի գանձին աւանդապահ կարգուեր էր, երբ Գաղիկ թագաւորը Կ. Պոլիս տարուեցաւ: Սակայն կ'երեւի թէ այդ չարախօսութիւնը հիմ մը ունէր, որուն թարգման կը հանդիսանար Ա. Լաստիվերտցին. «Քանզի յոյժ սիրող էր գանձուց Պետրոս, որ եւ բազում վասն այնր եպիսկոպոս զնա»¹⁰:

Թէպէտ խաչիկ կաթողիկոսը յայտնի փաստերով ապացոյց կու տար թէ մօրեղբօր գանձէն քովը բան մը չունի, եւ նոյն իսկ չէր գիտեր թէ նա բան մը ծածկուած ունենայ տեղ մը, սակայն, կայսրը պահանջելէն չէր դադար. եւ որովհետեւ չէր վրնար իրաւունքով պահանջել՝

2 Մ. Ուոհ. Բ. 152:

3 Մ. Ուոհ. Բ. 150:

4 Մ. Ուոհ. Բ. 150-151:

5 Մ. Ուոհ. Անդ:

6 Մ. Ուոհ. Բ. 151-152:

7 Մ. Ուոհ. Բ. 152:

8 Ա. Լաստ. ԺԴ. 60:

9 Մ. Ուոհ. Բ. 164:

10 Ա. Լաստ. ԺԴ. 60:

զոր առանց իրաւունքի կ'ուզէր, խորամանկ միջոցի մը դիմեց, «ընդ հարկի կամէին արկանել զնա»¹¹:

Քաջատեղեակ Լաստիվերտցիին քիչ մը մութ բացատրութեան պարզ իմաստը սա է, թէ Կոստանդին ժ. Դուկաս կ'ուզէր խաչիկին վրայ դնել տուրք մը, որով կաթողիկոսը պարտաւոր պիտի ըլլար տարուէ տարի արքունի դանձին հատուցանել որոշուելիք գումար մը: Եթէ այս պահանջը ընդունէր կաթողիկոսը, բիւզանդացի հպատակի մը աստիճանին պիտի իջնէր, եւ հայոց աթոռը Կ. Պոլսոյ աթոռին հպատակ պիտի դառնար. եւ ճիշտ ասոր համար է որ խաչիկ կաթողիկոս թափանցելով կայսեր նենգաւոր դիտաւորութեան խորքը՝ մերժեց եղած պահանջը, անկախ յայտարարելով թէ «գոր մինչեւ յիմ ժամանակն չէ լեալ՝ եւ ոչ ես հաւանքիմ»¹²:

Յուսախար Կոստանդին Դուկաս, խաչիկ կաթողիկոսը հարցնւորձէ անցուց, անոր զխնուն շատ մը սպառնալիքներ ըրաւ, եւ նոյն իսկ ըսաւ թէ «ոչ ելանիցես աստի, եթէ ոչ գիրամայեալս ի մէնջ յանձն առնուցուս»¹³: Սակայն, հակառակ այս մեծասաստ սպառնալիքներուն, խաչիկ կաթողիկոս անխախտ մնաց իր պնդումին վրայ, յանձն առնելով երեք տարի աքսորի մէջ տառապիլ: Իրաւունք ունէր Չամչեան պատմագէտը Յոյներու դէմ այս արդարութեան բողոքը ուղղելու. «Յոյներու դործելակերպը դարձանքի արժանի է, վասնզի Հայոցմէ յափշտակած մեծ եւ լիազանձ աշխարհը թշնամիներու աւարառութեան մատներ էին, անդին չնչին բաներու ետեւէն կը վազէին: Պարսիկները եւ Թուրքերը անդադար յարձակելով իրենց իշխանութեան սահմաններուն վրայ, քաղաքներու դանձերը կողոպտելով կը տանէին: Իսկ Յոյները Հա-

յերէն լուծանքը կը պահանջէին. անոնք փոյթ չըրին գոնէ մարդիկը փրկել, փոխանակ լուծային ետեւէն վաղելու. այլ մեր պատուական աշխարհը բոլորովին աւարառութեամբ ոտնակոխ ընել տուին. իսկ իրենք մեր բոլոր ազգը կը նեղէին եւ բնաւ դադար չէին տար»¹⁴:

ԹՈՒՐԿԵՐԸ ՍԵՐԱՍՏԻՈՅ ՄԷՋ

Սելճուքեան առպատակները անդադար կը վերադառնային եւ կողոպտելով ու զերելով ետ կ'երթային: Անոնք ոչ միայն անապատի վերածեր էին Բագրատունի եւ Արծրունի թագաւորներու ամէնէն հարուստ ու բարգաւաճ նահանգները, այլ նաեւ անցեր էին Եփրատի արեւմտեան ափը, Փոքր Հայքի գաւառները: Չէր մնացած քաղաք, չէր մնացած գաւառ, հին Հայաստանի մէջ, որ անոնց բռնութեան եւ դառնութեան բաժակը քամած չըլլային: Իրենց առջեւ չգտնելով դիմադրութեան լուրջ ոյժ մը, բացի ասդին անդին տարածուած հայ իշխաններու յանդուգն վաշտերէն, անցած էին Հայաստանի մէջէն, դացած ապականած նաեւ Փոքր Ասիան:

Դեռ նոր էր որ Բիւզանդիոնի թագը կապուէր էր Կոստանդին Դուկասի զըլխուն, երբ 1059 թուի Մարտի 6ին Սուլթան Տուղրիլի հրոսակները, «հազարին բազմութեամբ առանց համարոյ որպէս զաւաղ ծովու»¹⁵, մտան Կապադովկիա եւ քաղցին «բազմամարդ եւ նշանաւոր» Սեբաստիա քաղաքին վրայ: Հրոսակներու առաջնորդներն էին Սուլթան Տուղրիլի արքունական երեք ամենամեծերը. Սամուխ, Ամուրքաֆ եւ Գիճաճի, «արքա չարք եւ արեանարբուք առաւել քան զդադանս, եւ սեւազունդ զօրօք եւ մահաբեր նշանօք»¹⁶: Մտադրած էին ձերբակալել

Ատոմ եւ Աբուսահլ Արծրունի թագաւորները. բայց արշաւանքին լուրն առնելուն պէս, Ատոմ եւ Աբուսահլ ժամանակ ունեցան բազմաթիւ իշխաններով խաւատանէք բերդը ապաստանիլ¹⁷, մինչեւ որ հրոսակը հեռանար: Սամուխ, 1059ի 4 Յուլիսին քաղաքը պաշարեց. «յօր բարեկենդանի վարդապետին»¹⁸. Թէպէտ Սեբաստիա անապատական էր, այնուհանդերձ Թուրքերը վայրկեան մը համարձակեցան քաղաքը մտնելու, «զի տեսանէին զբազմութիւն եկեղեցեացն սպիտակա եւ դուրբէթաճեւս, զիտացին եթէ վրանք զօրացն իցեն»¹⁹. Բայց յետոյ երբ իմացան թէ քաղաքը պահակազօրը չունի՝ խուժեցին ներս եւ սարսափելի կոտորած մը ըրին, «անհամար մարմինք չարաչար խոցմամբ ի յերկիր թաւալէին, եւ հոսեալ արեանցն լնոյր զերկիր, եւ տեսողացն սոսկալի երեւէին... եւ դաշտն արեամբ լցեալ. եւ դեռն որ անցանէր ընդ մէջ քաղաքին, փոխանակ յատակ ջրոյն՝ ի յարին դարձուցանէր զգոյնն: Եւ բազումք այն էին որ հրով այրեցան. եւ ահա անկեալ կային բազումք, իշխանք եւ մեծք եւ փառաւորք մահաբեր խոցմամբ ի մէջ մաքուր եւ պատուական դիտանցն արեամբ ծածկեալք լինէին, եւ ի սպիտակութենէ մարմնոցն որպէս դաստեղս փայլէին»²⁰:

Կոտորածին անմիջապէս յաջորդեց էր կողոպուտը. «ոսկիի, արծաթի, ակունքի, մարգրիտի, դանձերու եւ դիպակներու քանակութիւն, զոր յափշտակեցին, կ'ըսէ նոյն պատմագիրը, անթիւ ու անհամար էր», վասն զի Սեբաստիա հայոց թագաւորներու տուն եղեր էր²¹: Թուրքերը ութը օր մնացին Սեբաստիոյ մէջ, եւ մեկնելէ առաջ Սեբաստիա եղաւ «իրբեւ զիւղ մի այրեցեալ հրով»²²:

Երբ Սեբաստիա բոցերու մէջ էր, արինկղակ բարբարոսները մեկնեցան

Պարսկաստան, հետեւին քաշելով մարդերու, կիներու, մանուկներու եւ աղջիկներու անհամար բազմութիւն մը²³: Նոյն պատմիչին նայելով, քաղաքին վեցհարիւր եկեղեցիներն ալ բոցերու ճարակ եղան. ինչպէս ուրիշ տեղ, հոս ալ եկեղեցիներու բազմութիւնը հասկնալու է եկեղեցիներու խորհրդուն մէջ շինուած խորանները:

Ազգային աղէտներուն դիմաց, Մ. Ուռհայեցին կ'աղաղակէ. «Ո՞վ կրնայ պատմել մի առ. մի հայոց տան վրայ հասած չարիքները, որոնք առաջ եկան անոր անտէրունչ վիճակէն, սուտ պահապաններէն, յոյն տկար թուլամորթ վատ ազգէն»²⁴:

ՀԱՒԱՏԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԱՏԵԱՆ

Իրաւունք ունէր հայ պատմագիրը, իր սրտին դառնութիւնը յոյներու դէմ պոռթկալու. թուրքը իր սուրը կը մխրձէր հայ մսին մէջ, յոյնը՝ անոր հոգիին մէջ: Կոստանդին Դուկաս, իրբեւ պաշտպան Քաղկեդոնական դաւանութեան, հայերէն «լուծանք» պահանջելը պատրուակ առած էր, որ կը ծածկէր իսկական պատճառը, որ չէր վրիպած մեր պատմիչներու աչքէն. կայսրը «առնէր քննութիւն հաւատոյ, եւ կամէր ամենայն ջանիւ դարձուցանել զհայոց քրիստոնեայքն ի դաւանութիւն Քաղկեդոնի»²⁵: Ան կը խորհէր, որ եթէ խաչիկ կաթողիկոսը այդ ուղղութեան վրայ բերէ, յոյն եւ հայ եկեղեցիներու միութիւնը յաջողութեամբ կը պտակուի: Սակայն, նկատելի է որ հայ եկեղեցին յունական եկեղեցիէն բաժնուելէն ի վեր, Բիւզանդիոնի բոլոր կայսրները, մանաւանդ հայ կայսրները, հայերէն նոյն քաղկեդոնական դաւանութիւնը կը պահանջէին, առանց երբեք քննելու՝

11 Ա. Լաստ. Անդ:

12 Ա. Լաստ. Անդ:

13 Ա. Լաստ. ԺԴ. 61:

14 Չամչեան Բ. ԳԼ. ԽԵ. 969:

15 Մ. Ուռհ. Բ. 159:

16 Մ. Ուռհ. Անդ:

17 Մ. Ուռհ. Բ. 159-160:

18 Մ. Ուռհ. Բ. 160:

19 Մ. Ուռհ. Բ. 161:

20 Մ. Ուռհ. Անդ:

21 Հմմտ. Մ. Ուռհ. Բ. 160-161:

22 Մ. Ուռհ. Բ. 162:

23 Սմբատ Գունդ. Էջ 75:

կը վայելէր, նոյն իսկ հայոց անկախութեան շրջանին, իսկ հայ թագաւորները, յաճախ նեղ մտած ժամանակ՝ անոնց հըզօր միջնորդութեան կը դիմէին, օտար արքունիքներու հետ կարեւոր խնդիրներ կարգադրելու համար: Այս մտահոգութենէն տանջուած՝ բնական բան էր որ այդ հայ իշխանները, որոնք հայ ազգին ապագան մութ կը տեսնէին, դիմէին Կոստանդին Դուկաս Ժ. կայսեր, եւ մեծ աշխատանքով ու թախանձանքներով միջնորդէին՝ որ ազատ արձակուէր հայոց կաթողիկոսը: Շատ բնական է նաեւ որ կայսրը չյաջողելով խոնարհեցնել իշխիկ Բ.ի անդիմադրելի կորովը, զիջած ըլլայ հայ իշխաններու առջեւ, մանաւանդ Դուկաս իբրեւ մոլեռանդ յունադաւան, իր կայսրութեան մեծագոյն հոգը ըրած էր, ինչ որ պիտի տեսնենք քիչ վերջ, Հայերը յունադաւանութեան կապիճին մէջ մտցնել: Այդ ծրագիրը յաջողութեամբ պսակելու համար, անիկա պէտք ունէր Փոքր Ասիոյ հայ իշխաններուն, որոնց ձեռքով կարելի էր հայ եկեղեցին միացնել յունականին հետ:

Այսպէս, 1062 թուին, կայսրը ազատ արձակեց իշխիկ կաթողիկոսը, առանց հարկի³⁴, այսինքն՝ առանց կայսերական պահանջներուն զոհացում ստացած ըլլալու: իշխիկ կաթողիկոս իր բնակութիւնը հաստատեց Տարենտիա, այժմ Տարենտէ, ուր Դուկաս Ժ. երկու վանք շնորհեց էր իրեն: Պատմիչը կ'աւելցնէ թէ կայսրը տուած էր նաեւ իշխիկին «Գրով եւ ոսկի մատանեալ, զոր ի Հայս իւրեանց տեղիք էին»³⁵: Որով կրնանք իմանալ ներքին զաւառներուն մէջ զբաղուող կաթողիկոսական կալուածները, բայց արդիւնաւոր էր կաթողիկոսին այդ կողմերը երթալը, որովհետեւ Բիւզանդական կասկածոտ քաղաքականութիւնը կը վախէր, ինչպէս Պետրոսէն, որ իշխիկն ալ հայ ժողովուրդը ապստամբու-

թեան չմղէ: Այս կասկածէն է որ իշխիկ բնակավայր նշանակած էին Տարենտա, որ երեք հայ թագաւորութիւններու սահմաններէն դուրս՝ յոյն կուսակալութեան մը մէջ կը մնար, «ի սահմանս Կոկիսոնի»³⁶: Հոն, ժամանակին աքսորուած էր Ս. Յովհան Ոսկերբեան, Կ. Պոլսոյ Հայրապետը, եւ հոն դիւրին էր յունական աչքերուն՝ հսկել իշխիկի վերայ, որ աւելի վտանգաւոր էր, քան ինչ որ չէր անոր մօրեղբայրը:

Ս. Ուսայեցիին համաձայն, իշխիկ կաթողիկոսին նոր աթոռանիստը եղաւ Թաւրուր³⁷, որ պէտք է ըլլայ Տարենտայի մօտ, իրեն պարզեւած երկու վանքերով, որ այնուհետեւ հայրապետանոցի վերածուեցաւ: Սակայն եթէ հայերը բարեխառն գտնուեցան, շնորհիւ իշխիկ Բ.ի ղեկավարութեան, կաթողիկոսական աթոռին անկախութիւնը փրկած տեսնելով, բայց կաթողիկոսը նոր վիշտերուն թարկուեցաւ, վասն զի իր նոր աթոռը հաղիւ հասած՝ Պարսկաստանէն դարձեալ փոթորիկ մը փրթաւ, հայ ժողովուրդը մատնելով նոր սարսափի:

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՍԵՐՈՒՆԴՐ

Գրիգոր Մագիստրոս՝ տանուտէր եւ հայր էր բազմաթիւ զաւակներու, որոնցմէ կը յիշատակուին չորս մանչեր եւ չորս աղջիկներ, զորս այնպէս կը սիրէր, որ պէս թէ մէկ հատիկ ըլլային, կամ ուրիշ արտաքին զբաղում չունենար եւ ուսման չպարապէր: Միացած իր բարեպաշտուհի կնոջ հետ՝ մատաղ տարիքին անոնց տրուաւ իշխանական նուրբ կրթութիւն մը, անկեղծ բարեպաշտութեան հետ՝ ուսման եւ յունասիրութեան խորին զգացում մը: Յիշեալ չորս աղջիկները արժանի կերպով ազնուական տոհմերու հարսնացուց: Մէկը Վեստ-Սարգիս Սիւնիի հետ, միւսը՝ Մամիկոնեան Թոռնիկ Մու-

շեղեանի հետ, որ ինչպէս տեսանք, Տարոնի եւ Սասունի իշխանն էր: Ծանօթ է թէ ինչպէս Լուսաւորչի տոհմը հին չըրջանէն սկսեալ՝ անձուկ կապերով կապուած էր Մամիկոնեան մեծ ու պայծառ եւ հայրենասէր տոհմին հետ. այսպէս ալ միջին դարուն, Պարթեւ-Պահլաւունի երկրորդ ճիւղը խնամութեամբ զօրուած էր նոյն զերդաստանին հետ, երկու տոհմերն ալ խորապէս հայասէր եւ յունասէր, երկուքն ալ փառք եւ պատիւ Հայոց ազգին: Երրորդը ամուսնացած էր Վասակ իշխանին հետ, որդի Ապիրատ իշխանի ու թոռ Պահլաւունի Հասանի, որ չորս զաւակներ ունեցաւ, Գրիգոր, Ապլիմասապ, Հասան եւ Բարսեղ: Չորրորդը աղջիկը ամուսնացաւ Ծովքի իշխանին հետ, եւ ասոր զաւակներն են, Ապիրատ, Վահրամ, Վասակ եւ Գրիգոր: Ապիրատին զաւակներն են Վասիլ, Ծահան, Գրիգոր եւ Ներսէս. վերջին երկուքը Պահլաւունի: Վասիլի որդին էր Գրիգոր Տղայ. Ծահանի որդին էր Գրիգոր Ապիրատ, եւ ասոնց թոյրն էր Ներսէս Լամբրոնացիի մայրը:

Մագիստրոսի արու զաւակներն են Վասակ, Վահրամ, Վասիլ եւ Ֆիլիպէ, որոնք՝ ինչպէս քոյրերը՝ բուն Հայաստանի մէջ ծնած են, զեռ Բագրատունեաց թագաւորութեան ատեն, եւ առաջինները անոնց արքունիքը մտած ելած են: Անշուշտ հայրենիքն ալ անոնց ապագային համար, պարտ ու պատշաճ պաշտօններ պատրաստեց էր. դժբախտաբար Մագիստրոսի արու ճիւղը յաջողութիւն չթողուց. վասն զի Վասիլ եւ Ֆիլիպէ, ծաղիկ հասակին մէջ վախճանած են. իսկ Վասակ, անդրանիկը, թէեւ հօր պէս իշխանութեամբ պայծառացաւ, կայսերական հրամանով՝ Անտիօքի դուքս կարգուեցաւ. բայց խաչակիրներու հոն գալէն քանի մը տարի առաջ, ժողովրդական յեղափոխութեան մը մէջ սպաննուած է 1076ին, եւ իր սերունդը չի յիշուիր: Միւսը, որ կարգով երկրորդն էր, Վահրամ, քաղաքական մեծ պատուի հասաւ,

եւ աւելի ուշ՝ ինչպէս պիտի տեսնենք՝ Վկայասէր տիտղոսով անմահացաւ:

Լիովին հասկնալու համար Մագիստրոսի ճշմարիտ ծնողական եւ քրիստոնէական սրտի եւ հոգիի մեծութիւնը, բաւական է կարգաւ իր մէկ վաղամեռիկ զաւակին կենդանութեան եւ մահուան վրայ դրած թուղթերը, ուր երեւան կուգան անդուգական հօր մը թէ որդեսիրութիւնը եւ թէ աստուածասիրութիւնը:

Մագիստրոսի տունը պայծառացնողները իր երկու աղջիկներու սերունդները եղան, որոնք Պահլաւունի անունը պահեցին, կամ իբրեւ խնամիական փառաւոր անուն մը, եւ կամ, ինչպէս Հ. Արիւշան կը վկայէ, նոյն իսկ փեսաներն ալ՝ Հասանի թոռ Վասակը եւ Ծովքի իշխանը, Պահլաւունի ցեղէն էին³⁸: Ամէնէն աւելի նշանաւոր եղան Ծովքի Պահլաւունի իշխանէն սերած չորս կաթողիկոսները, Գրիգոր Պահլաւունի, Ներսէս Շնորհալի, Գրիգոր Տղայ, Ապիրատ եւ Ներսէս Լամբրոնացի կաթիկոսներ, որոնք օր մը պիտի ըլլան Կիլիկիոյ երկնակամարին լուսաւոր աստղերը, այնպէս ինչպէս եղեր էին Ս. Գրիգոր Պարթեւ-Պահլաւունի Լուսաւորչի տան կաթողիկոսները:

Այս իրականութիւնը հասկնալու համար՝ պէտք է շեշտել, որ Պահլաւունի Մագիստրոսին սերունդը երեք էական կէտերէ կուռ եւ ներգաշակ ամբողջութիւն մը կազմեց: Ասոնց առաջինն է գիտակից կրօնականութիւնը, որուն շուրջը բոլորած են մեծով ու պղտիկով. երկրորդ կէտը ջերմ ազգասիրութիւնն է, հիմնուած ու պահպանուած աւանդութիւններու վրայ. երրորդ կէտը հելլենական լայն եւ պայծառ միտքը, որ ազգային ծէսերէ, ազօթքներէ դուրս, տիեզերական եկեղեցիին հետ միեւնոյն զաւանդով է միացած, ճիշտ այնպէս՝ ինչպէս որ եղեր էր Ս. Գրիգոր Լուսաւորչի Տան օրով:

34 Ա. Լաստ. Ժ. 61:

35 Ա. Լաստ. Անդ:

36 Մագիստրոսի Գրիգոր. էջ 57:

37 Մ. Ուսայ. Բ. էջ 165:

38 Հմմտ. Հ. Ղեւոնդ Արիւշան «Շնորհալի եւ պարգայ իւր», Վենետիկ, 1873, էջ 26:

ՊԱՆԿԻՆԻ ԵՒ ԹՂԵՈՒՄԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Սուրբան Տուղրիլ Սամուխ զօրավարէն տեղեկացած ըլլալով թէ յոյներու զինուորական զօրութիւնը երթալով ալ աւելի կը տկարանար, եւ անոնք անպիտոյթ են իրենց տէրութեանց սահմանները պաշտպանելու, 1062ի մարտ 6ին, բաղմաթիւ բանակ Պարսկաստանէն ճամբայ հանեց դէպի Հայաստան, որ կը համարուէր կայսրութեան սահմանադիւրսը: Այս անգամ արշաւանքին առաջնորդներն էին երեք մեծ եւ երեւելի մարզիկ, որ էին Սլար-Սորասան, այսինքն Սորասան երկրին գունդին Սլար Կամ զօրավար, Մըճմըճ եւ Իսուրլ³⁹: Ասոնք զինեցին Պաղին զաւառը եւ անոր գլխաւոր կեդրոնը Արկին վրայ, եւ զանիկա մատնեցին հուրի եւ արիւնի: Անկէ մեկնելով թուրքերը «որպէս զօճ թունաւոր» կը սողային Պաղին զաւառին սահմանակից Թլխումի վրայ, որ «անհոգ եւ ուրախ, իր իշխաններով եւ ժողովուրդով զուարճութեան անձնատուր՝ պատրաստ կերակուր եղաւ զազաններու, զայլերու կամ կատաղի շուններու»⁴⁰: Թլխում չորրորդ Հայքի մէջ, երկար ժամանակէ ի վեր բիւզանդական ազդեցութեան տակ էր. «Բարգաւաճ երկիր մըն էր, անասուններով հարուստ, հոճ եւ ծաղկած բնակչութեամբ մը լեցուն»⁴¹: Մ. Ուռհայեցին կը յիշատակէ թէ 1062ի Հոկտ. 5ի շաբաթը՝ իր ժամանակին սարսափելի ջարդերէն մէկն եղաւ: Այդ օրը, ժամը ութին «լայնատարած դաշտը արիւնով, գերիններով եւ անողորմ կոտորածով լեցունեցաւ. անթիւ էին անոնք որ կրակով այրեցան. բոլոր զաւառին մէջ չկար մէկը որ կարենար սուրէն ազատիլ. այդ օրը շատերը առին մարտիրոսութեան պսակը»⁴²:

Այդ նահատակներուն մէջ աչքի կը

դարնէր քահանայ մը Քրիստափոր անուանով, որ «տեսնելով անհաւատ զինուորներու բաղմութիւնը, եկեղեցիին մէջ ժողովեց իր գիւղին բնակիչները, այր, կին եւ տղայ, յետոյ պատարագեց եւ ամէնուն ալ Սուրբ հաղորդութիւն տուաւ: Սակայն անհաւատները եկեղեցին չըջապատեցին, եւ հաղորդուող հաւատացեալները մէկը միւսին ետեւէն դուրս ելած ժամանակ՝ զացին դէպի արիւնարբու գաղանները, եւ անոնցմէ սրախողխող եղան: Երբ Քրիստափոր տեսաւ որ ինքը եւ իր երկու որդիները թորոս եւ Ստեփանոս ողջ մնացեր են՝ ծուռը դրին Աստուծոյ առջեւ, եւ օրհնելով զայն՝ դիւրար համբուրեցին, յետոյ յառաջանալով մինչեւ դուռին չէմը, ընդունեցան մարտիրոսական մահը»⁴³:

Երբ այս կոտորածներու լուրը հասաւ Ամիտ քաղաքը, արդի Տիարպեքիր, անոր ամիրան, Սարադ-Դաուլա, որ ժառանգորդ էր Մարմանիդեան քիւրտերու հարստութեան, մեծապէս յուզուեցաւ, վասն զի «բարի եւ ողորմած էր դէպի քրիստոնէից ազգը», եւ իբր բարեկամ Սլար Սորասանի, խնդրեց որ գերիները իր զաւառին մէջ ծախուին, յետոյ հրաման հանեց որ իր երկրին հպատակները գերիները դնեն: Երբ ասոնք Ամիտ հասան, անոնցմէ շատերը քաղաքին դրան առջեւ մարտիրոսացան, որոնց վրայ՝ հրակերպ տեսիլքով երկնքէն լոյս իջաւ»⁴⁴: Բարբարոսներու հասցուցած չարքը, այնքան սոսկալի եղած էր, որ Ուռհայեցին կրցաւ գրել. «Անոնց ձիւրուն սմբակները՝ լեռներն ու բլուրները մաշեցուցին, զիականերու բաղմութենէն հոտեցաւ երկիրը եւ անհամար գերիներով լեցունեցաւ պարսից տունը, եւ արիւնով զինովցած զազաններու բոլոր ազգերը. իսկ լացի, սուգի եւ տրտմութեան մէջ

նստան Քրիստոսի հաւատացեալները».
ապա կ'աւելցնէ «Աստուած իր բարերարութեան երեսը մեղմէ դարձուց. այս բոլորը եղաւ մեր մեղքերուն եւ մեր չար վարքին համար, որոնց համար մատնեց զմեզ թուրք ազին ձեռքը»⁴⁵:

Ինչպէս մեր հին դարերու, այսպէս ալ միջին դարու պատմիչները, խորապէս ներշնչուած մարգարէներու յանդիմանող խօսքերէն, որոնք ուղղուած էին հրեայ ժողովուրդին, անոր դործած մեղքերուն համար, եւ Ասորեստանի անգութ թագաւորը կը նկատէին իբրեւ աստուածային արդարութեան զաւաղան, այնպէս ալ մեր ճշմարտապէս երկիւղած եւ աստուածաւախ մարդիկը, այն խոր համոզումն ունէին՝ թէ Հայոց գլուխէն անցած զարհուրելի տառապանքները հետեւանք էին անոր դործած մեղքերուն, որոնք իր վրայ կը հրաւիրէին երկնքի բարկութիւնը, որ իբր արդարութեան զաւաղան կը դործածէր այլազգիները՝ Հայոց ազգը պատժելու համար: Այս մտածութենէ առաջնորդուած՝ անոնք քիչ անգամ նկատի կ'առնէին ազգային ազդակները, կամ հայ ժողովուրդի ղեկավարներու ձախող դործերը, որոնք այնքան ծանրապէս կ'ազդէին հայ ժողովուրդի ճակատագրին վրայ:

ՓՈՒՆՎՐԵԺԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

Արդէն իսկ Թուրքերը այրեր էին հայկական երկու մեծամեծ զաւառները, երկիրը անապատի դարձուցած մինչեւ Եփրատ գետը, երբ աղետին լուրը հասաւ Կ. Պոլսոյ արքունիքը. Կոստանդին Դուքաս կայսրը, որուն անհոգութիւնը առաւել տեղ անցած էր, իր թմրութենէն քիչ մը արթննալով բանակ մը զրկեց Պաղին եւ Թլխում: Կայսերական բանակին վերին հրամանատար կարգեր էր մեծ զօ-

րավար մը, Հերվէ բախտախնդիր Նորմանդացին, զոր մեր պատմիչները կ'անուանեն «Փռանքոպոլ»⁴⁶: Կայսրը զրեց նաեւ կայսերական ուրիշ զօրավարի մը, «Դաւադանոսի», որ այդ ատեն Եգեսիոյ Դուքան էր, «այդ քաջ եւ հզօր ի պատերազմի եւ անուանի ի վերայ երկրի»⁴⁷, միանալու Հերվէի բանակին: Դաւադանոս Եգեսիայէն, Կառկարէն, Հիւսն-Մանսուրէն զօրքեր ժողովելով՝ քաղեց դէպի աղետալ վայրերը: Բայց արդէն ուշ էր, վասն զի կայսերական զօրավարները հոն չհասած, Թուրքերը եւ Պարսիկները դարձեր էին Պարսկաստան, հետեւին տանելով երկու մեծ զաւառներէն բռնած գերիները, որոնցմէ շատերը անարգ դիւնով ծախեր էին: Գերիներու մէջ էին բաղմաթիւ հայ իշխաններու կիներ եւ զաւակներ, որոնց հետ նաեւ սակաւթիւ Յոյներ:

Զօրավարները եւ իրենց բանակները ուրիշ բան չկրցան ընել, բայց եթէ ներկայ ըլլալ ահռելի տեսարանի մը, «Երբ Դաւադանոս, կը գրէ Մ. Ուռհայեցին, բանակ զարկաւ Թլխումի դաշտին վրայ, հոն տեսաւ փռուած, նեխած եւ փտած զիականերու բաղմութիւնը: Այդ տեսարանին վրայ յուզուած՝ անոր զինուորները առ հասարակ լացին»⁴⁸: Իսկ Թուրք բանակին վերջին մնացորդները, որոնք կոտորելու եւ աւերելու համար, տակաւին այդ կողմերը կը դեգերէին, Բիւզանդական բանակին մօտենալու լուրն առած ըլլալով խուճապահար եղան. ինչ որ անգամ մըն ալ կ'ապացուցանէ, թէ Հայոց ազգին կրած չարիքները, ոչ թէ հայ ազգին «մեղքերը եղեր են», այլ Բիւզանդիոնի անհոգութեան եւ պաշտպանող պահակներու պակասութեան երեսէն, որոնք անդադար կը քաջալերէին՝ արիւնի եւ կողոպուտի սիրահար Թուրքերու մուտքը մեր երկրին մէջ:

39 Մ. Ուռհ. Բ. էջ 165:

40 Մ. Ուռհ. Բ. 166:

41 Մ. Ուռհ. Անդ:

42 Մ. Ուռհ. Անդ:

43 Մ. Ուռհ. Բ. 167:

44 Մ. Ուռհ. Բ. 168:

45 Մ. Ուռհ. անդ:

46 Մ. Ուռհ. Բ. 160-170:

47 Մ. Ուռհ. Բ. 170:

48 Մ. Ուռհ. Անդ:

Բայց որովհետեւ Դաւադանոս վճռած էր «վրէժ լուծել քրիստոնեաներու արիւնին»⁴⁹ եւ մեծ ջանքով վերելք քրիստոնեայ Բիւզանդիոնի պատիւը, իր բանակով դնաց յարձակեցաւ մուսուլմաններու իշխանութեան տակ գտնուող Ամիտ քաղաքին վրայ, ետեւէն քաշելով նաեւ Նորմանդացի Հերվէնը: Հանդամանքները նպաստաւոր էին, վասն զի քաղաքին ամրան, Սայիտադ-Դաուլիան քաղաքին բնակիչներէն թունաւորուած էր⁵⁰:

Երբ քաղաքացիները լսեցին հռոմէներու գալուստը, նենգաւոր խորհուրդ մը յղացան. անոնք վարձկան Հերվէին տասը հազար դահեկան զաւառի տալով՝ սէր եւ միութիւն հաստատեցին անոր հետ: Դաւադանոսին ականջին հասնելով կաշառքին լուրը, նախատեց կաշառառուն, եւ երբ կայսերական երկու բանակները հասան Ամիտ քաղաքին դրան առջեւ, ճիշտ այնտեղ՝ որ «Հոռոմ դուռ» կը կոչուէր, այլազգիներու զինուորները պատերազմի ելան: Կաշառակիր «Փրանգոպոլը» նոյն օրուան պատերազմի դործողութիւնները նենգութեամբ Դաւադանոսին յանձնեց, իսկ ինքը իր հետեւակ եւ ձիաւոր զինուորներով պատերազմէն ետ քաշուեցաւ:

Դաւադանոս փոխ-վրէժի զգացումով ոգեւորուած, «գոչեաց որպէս զառիւծ ի վերայ Տաճկաց, կ'ըսէ Մ. Ուռհայեցին, եւ յարձակեցաւ ի պատերազմ»: Չէնքերու խառնուրդին ժամանակ, այլազգիներու բանակէն քաջ մարդ մը, Հեծն-Պշաւայ կոչուած, հռոմ զինուորներուն մեծ կոտորած տալով, կրկնակի հարուածներով պատուեց Դաւադանոսի բանակին ճակատը, բայց երբ մօտեցաւ Դաւադանոսին, ասիկա «առիւծի պէս վրան յարձակեցաւ եւ նիզակով խոցելով անոր սիրտը, պատուեց լայն պահպանող զրահը եւ գեղարդը միւս կողմէ դուրս ելաւ, որով,

երկուքն ալ ձիերէն վար ինկան. ապա յարձակելով իրարու վրայ, տեղն ու տեղը սպաննուեցաւ Դաւադանոսը, իսկ Պշաւայն սատկած մնաց նիզակով»⁵¹:

Երբ լուրը տարածուեցաւ թէ քաջ Դաւադանոս մեռած է, անոր զինուորներէն մէկը Տավար անունով, դնաց «Փրանգոպոլին» մօտ եւ զայն իր զօրավարին մահուան պատճառ բռնեց: Կ'երեւի թէ զիւցազն Դաւադանոսին մահը Հերվէի խղճմտանքը խոցելով, անոր մահուան վրէժը առաւ՝ յարձակելով այլազգիներու վրայ, քաղաքին դրան առջեւ կոտորելով անոնցմէ տասնեւհինգ հազար հոգի⁵²:

Գրեթէ այդ ժամանակ, յանդուգն հայ մը, Յեհնուկ անունով, ուղեց իր արիւնակիցներու օգնութեան ձեռք տալ: Նա հինգ հազար կուսակիցներով դնաց Ամիտ գաւառը, Գիւրտերու ձեռքէն խլելու համար հայոց հօտերը, կողոպտող Թուրքերէն դնուած. բախումը տեղի ունեցաւ ձեպու-Շահար կոչուած տեղը, ուր հայազգի ասպատակողը, յաջողեցաւ խլել անոնց ձեռքէն ոչխարներու բազմաթիւ հօտեր, զանազան աւարներ եւ գերիներ եւ բերաւ հասցուց զանոնք Սեւերակ բերդը, Կարկառի հարաւ արեւելեան կողմը: Այս տեղը վրայ հասաւ Խալիտ Գիւրտ Շեյխը, իր ուղիներով բանակի մը գլուխը անցած: Յեհնուկ, բազմութենէ չըրջապատուած՝ յաղթուեցաւ, իր խումբը ցրուեցաւ: Գիւրտերը անկէ առնուած աւարն ու գերիները կրկին յափշտակելով՝ դարձան Ամիտ⁵²:

Սակայն Հերվէին շարունակած փոխ-վրէժի պատերազմը յաջողութեամբ պըսակուեցաւ: Իր բանակով Ամիտէն դէպի Կարին գացած ժամանակ, ճամբուն վրայ հանդիպեցաւ Թուրք բանակին, Թըլ-խումի թրքական ջոկատներուն, որոնք՝ ինչպէս տեսանք, այդ հարուստ գաւա-

ռը ջարդեր ու կողոպտեր էին: Անիկա պատերազմեցաւ անոնց հետ, յաղթեց, շատերը կոտորեց, սպաննեց անոնց ամիրան, որ Ուսուկի կը կոչուէր, անոնց ձեռքէն առաւ աւարը եւ ազատեց գերիներու մեծ բազմութիւն մը⁵³:

Սակայն Հերվէն չկրցաւ երկայն ատեն իր յաղթութեան դափնիներուն վրայ հանդէլի, վասնզի քաջ եւ անկեղծօրէն քրիստոսասէր Դաւադանոսի մահուան

լուրը հասեր էր Կոստանդին Դուկասին եւ խորապէս տխրեցուցած զայն: Կայսրը տեղեկանալով որ այդ դիւցազին մահուան պատասխանատուն էր «Փրանգոպոլ»ին նենգութիւնը, կ'ըսէ Ուռհայեցին, կանչեց զայն Կ. Պոլիս եւ քար մը կապել տալով՝ պարանոցին՝ նետել տուաւ ծովը⁵⁴:

(Շարունակելի)

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ

53 Հմմտ. Մ. Ուռհ. Բ. 173:

54 Հմմտ. Մ. Ուռհ. Անդ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼԱՅՈՑ ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑԻՆ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1962, ք. 3-5, էջ 53)

ԳԼՈՒԽ Ը.

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑԸ ԺԶ.-ԺԸ. ԴԱՐԵՐՈՒՆ

Վերջին շրջանն է ասիկա Աղթամատոյցին զարգացման, որու քննութեան աղբիւր ունինք «Խրատք ժամատեղոյ կարգաւորութեան», յօրինուած ԺԶ. դարուն, նախորդ խրատներուն վրայ եւ ընդարձակմամբ: Ունի անոնցմէ կրկնութիւններ՝ որ մեզ չեն հետաքրքրեր, եւ նորութիւններ՝ զորս ուշադրութեան պիտի առնենք: Նոյնպէս «Գիրք մեկնութեան», քանի մը ժամագրքեր, Թումա եւ Առաքել Դաւրիթեցի պատմիչը:

1. Գիշերային. — Հարկ է առանձին նկատել յիշեալ Խրատքը, որ իր տարբերութիւններն ունի ժամագրքէն, եւ կը զանազանէ զիշերային պաշտամունքի մասերը լուր եւ տօնական օրերու միջեւ:

Առաջին պարագային՝ Զարթուցեալիս քարոզին սկիզբը կը գնէ եւ եւս խաղաղութեամբ, եւ Օրհնեա տէր՝ նախ քան Զֆէն գոհամալք, որ աներեւոյթ են ժամագրքերու մէջ: Իսկ տէրունական տօներուն կը գրէ, «Տէր եթէ շրբունքն (իմացիր, Տէր զի քաղունքն ալ) ի ձայն ասէ փոխ առ փոխ: ... Ապա եթէ փոխ առ փոխ ոչ կամիցին ասել, ի միասին տօնացեն՝ յատեան ելանելով, զի փոխ առ փոխ ի դասն ասի», մին Մաքենեաց եւ միւսը Սեպուհոյ ոճով:

Տէր, զի՞ քաղունքը ըսելու կերպին մէջ տարբերութիւն կայ հօս հինէն, որ թիւ էր: Տաթեւացին կը գրէր թէ «համաձայն երգեմք», իսկ «Գիրք մեկնութեան» կը զանազանէ «Կիւրակէից աւուրքն ի միասին ձայնիւ ասեմք, եւ յայլ աւուրսն ի թիւ», եւ թէ «երկու երկու տուն մի շունչ ասի» (14). Ինչ որ Տաթեւացին ալ ըսաւ արդէն: «Խրատ. ԺԶԿ.

49 Մ. Ուռհ. Անդ:

50 Մ. Ուռհ. Անդ:

51 Մ. Ուռհ. Բ. 172:

52 Հմմտ. Մ. Ուռհ. անդ: